

ART IN EMBASSIES EXHIBITION
United States Embassy Yerevan

Hovsep Pushman **L'Esperance** (detail), 1917

Oil on board, 31 ½ x 24 ½ in.

Courtesy of the President Woodrow Wilson House,
a site of the National Trust for Historic Preservation, Washington, D.C.

Հովսեփ Փուշման **Հույս և ակնկալիք** (դրվագ), 1917թ.

Յուղաներկ պանոյի վրա, 80 x 62,2 սմ

Տրամադրվել է Նախագահ Վուդրո Վիլսոնի

տուն-թանգարանի կողմից (մայրաքաղաք Վաշինգտոն)

Art in Embassies

Established in 1963, the U.S. Department of State's office of Art in Embassies (AIE) plays a vital role in our nation's public diplomacy through a culturally expansive mission, creating temporary and permanent exhibitions, artist programming, and publications. The Museum of Modern Art first envisioned this global visual arts program a decade earlier. In the early 1960s, President John F. Kennedy formalized it, naming the program's first director. Now with over 200 venues, AIE curates temporary and permanent exhibitions for the representational spaces of all U.S. chanceries, consulates, and embassy residences worldwide, selecting and commissioning contemporary art from the U.S. and the host countries. These exhibitions provide international audiences with a sense of the quality, scope, and diversity of both countries' art and culture, establishing AIE's presence in more countries than any other U.S. foundation or arts organization.

AIE's exhibitions allow foreign citizens, many of whom might never travel to the United States, to personally experience the depth and breadth of our artistic heritage and values, making what has been called a "footprint that can be left where people have no opportunity to see American art."

Արվեստը դեսպանատներում

1963թ. ԱՄՆ պետքարտուղարությունում ստեղծված «Արվեստը դեսպանատներում» գրասենյակը կարևոր դեր է խաղում մեր երկրի մշակութային դիվանագիտության մեջ՝ նպաստելով մեր մշակույթի տարածմանը ժամանակավոր ու մշտական ցուցահանդեսների կազմակերպման, արվեստագետների ներգրավմամբ ծրագրերի իրականացման ու տարբեր հրապարակումների միջոցով: Այս գրասենյակի ստեղծումից մոտ մեկ տասնամյակ առաջ արվեստի նմանօրինակ ծրագրի գաղափար առաջ էր քաշել ժամանակակից արվեստի թանգարանը: 1960-ականների սկզբին Նախագահ Ջոն Ֆ. Բենեդիկտին պաշտոնապես ընդունեց այդ ծրագիրը և Նշանակեց ծրագրի առաջին տնօրենին: Այժմ «Արվեստը դեսպանատներում» ծրագիրը ԱՄՆ դիվանագիտական հիմնարկությունների, հյուպատոսարանների, կեցավայրերի ընդունելությունների համար նախատեսված տարածքներում ունի ավելի քան 200 մշտական ու ժամանակավոր ցուցադրություն, որոնք կազմված ու ընտրված են ամերիկյան ու ընդունող երկրի ժամանակակից ստեղծագործողների աշխատանքներից: Այս ցուցադրությունների միջոցով, որոնք ԱՄՆ սահմաններից դուրս ամերիկյան և ընդունող երկրի արվեստի ու մշակույթի առանձնահատկություններն ու բազմազանությունն ի ցույց դնելու գերազանց հնարավորություն են, «Արվեստը դեսպանատներում» ծրագիրը կարողանում է ամերիկյան արվեստը ներկայացնել ավելի շատ երկրներում, քան որևէ այլ ամերիկյան հիմնադրամ կամ մշակութային կազմակերպություն:

«Արվեստը դեսպանատներում» ծրագիրը եզակի հնարավորություն է ԱՄՆ-ում երբևէ չեղած օտարերկրացիների համար՝ ծանոթանալու մեր արվեստի ու մշակույթի արժեքներին, որոնք «թողնում են իրենց հետագիծն այնտեղ, որտեղ մարդիկ հնարավորություն չունեն անձամբ տեսնել ամերիկյան արվեստը»:

Welcome

Armenians and Americans have a long and rich relationship rooted in shared cultures, heritage, and values. I am honored to serve as the U.S. Ambassador to Armenia as we continue to strengthen our ties and partnership. With the help of the State Department's Art in Embassies program, I am able to contribute in a special way to deepening those ties by bringing works of art from the United States to the Ambassador's residence in Yerevan.

The creative spirit of the Armenian people and their passion for color, design, and craftsmanship are a wonderful source of inspiration. I chose the work of artists from my home state of Ohio that speak to these qualities. Paul Hamilton's paintings capture the tranquil emotion of rural Ohio landscapes. Janice

Lessman-Moss brings a special beauty to life in her textiles that exude a network of patterns contained in abstract systems. Ann Rebele's invitation to look beyond the surface through innovative treatments of fabric brings a fresh perspective to familiar scenes. Quilting is woven into the life of many Ohio communities. One of my personal pieces of Ohio



Fireworks by Roberta Balogh

Ներածություն

Հայերի ու ամերիկացիների ժամանակի փորձությամբ անցած հարուստ ու բազմակողմ հարաբերությունների ակունքներում մշակույթի, ժառանգության և արժեհամակարգի ընդհանրություններն են: Մեր կապերն ու գործընկերությունը շարունակաբար ամրապնդվում են, և ինձ համար պատիվ է ծառայել Հայաստանում որպես Միացյալ Նահանգների դեսպան: ԱՄՆ պետքարտուղարության «Արվեստը դեսպանատներում» ծրագրի օգնությամբ ես հնարավորություն ունեմ յուրօրինակ ներդրում ունենալ այդ կապերի խորացման գործում՝ Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպանի կեցավայրում ցուցադրելով ամերիկյան արվեստի գործեր:

Հայ ժողովրդի ստեղծարար ոգին և գույների, արհեստների ու արվեստների նկատմամբ անսահման սերը ներշնչանքի հրաշալի աղբյուր են: Ցուցադրության համար ես ընտրել եմ իմ հայրենի Նահանգի՝ Օհայոյի արվեստագետների ստեղծագործությունները, որոնք ներդաշնակ են այս որակների հետ: Փոլ Հեմիլթոնի կտավներում Օհայոյի գյուղական խաղաղ ու անդորր բնաշխարհն է: Ջենիս Լեսման-Մոսի գործվածքե արարվածքները՝ արատապատ գունազեղ զարդանախշերով, ինքնատիպ են ու գեղեցիկ: Գործվածքից կերտած արվեստի մեկ այլ մոտեցում էլ ներկայացնում է Էն Ռիբելը: Նա Նորվոլի է մեզ հրամցնում ծանոթ պատկերները՝ բոլորիս հրավիրելով տեսնել ավելին, քան երևում է առաջին հայացքից: Մգդակելու կամ գործվածքից արվեստ կերտելու մշակույթը լայն տարածում ունի Օհայոյի ողջ տարածքում, և այդ ավանդույթները լավագույնս ներկայացնելու համար ես ցուցադրությանն ավելացրել եմ ինձ պատկանող մի գործ՝ Ռոբերտա Բալոգի «Հրավառությունը»: Ռոբերտա Բալոգն աչքի է ընկնում իր գույներով, մանրակրկիտ դետալներով, որոնք հիացմունք են առաջացնում ստեղծագործական գործընթացի նկատմամբ:

quilt art called *Fireworks*, by Roberta Balogh, hangs alongside the exhibition. Mrs. Balogh combines an eye for color with precision technique that embodies my admiration for the artistic process.

Lastly, on an unique and limited loan from Washington D.C.'s, President Woodrow Wilson House is Hovsep Pushman's lovely portrait of a young Armenian girl—*L'Esperance* (Hope). The painting was presented to President Wilson in 1917 as an expression of appreciation of the Armenian people for U.S. relief efforts during the Meds Yeghern (Great Calamity). The portrait symbolizes hope in the face of tragedy and underscores today's enduring ties between Armenians and Americans.

I would like to thank the artists and the President Woodrow Wilson House for generously loaning the beautiful artwork of this exhibition. I am grateful to all of them for sharing their creations with our community in Armenia. I would particularly like to thank our Art in Embassies Curator Braden Malnic and his colleagues who helped organize this exhibition and catalogue. I hope everyone enjoys the exhibition as much as I do.

Ambassador Lynne M. Tracy

Yerevan
July 2020

Եվ ի վերջո, ցուցադրության մեջ տեղ է գտել մի եզակի ստեղծագործություն՝ Հովսեփ Փուշմանի «Հույս և ակնկալիք» կտավը, որը տրամադրել է մայրաքաղաք Վաշինգթոնում գտնվող Նախագահ Վուդրո Վիլսոնի տուն-թանգարանը: Գեղեցիկ հայուհու այս դիմանկարը 1917թ. նվիրել են Նախագահ Վիլսոնին՝ շնորհակալություն հայտնելու մեծ եղեռնի ընթացքում հայ ժողովրդին Միացյալ Նահանգների ցուցաբերած օգնության համար: Դիմանկարը խորհրդանշում է հույսը՝ ի հեճուկս ողբերգության, և հայ ու ամերիկացի ժողովուրդների այսօրվա ամուր կապերը:

Շնորհակալություն եմ հայտնում այս արվեստագետներին և Վուդրո Վիլսոնի տուն-թանգարանին՝ արվեստի այս գեղեցիկ գործերը սիրահոժար ցուցադրության հանձնելու համար: Երախտապարտ եմ, որ հայաստանյան մեր բարեկամներին հաղորդակից եք դարձնում ձեր արվեստին: Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում «Արվեստը դեսպանատներում» ծրագրի համադրող Բրեյդեն Մալնիկին և նրա բոլոր գործընկերներին, որոնք օգնել են այս ցուցադրության կազմակերպման և գրքույկի պատրաստման հարցերում: Հուսով եմ բոլորն էլ ինձ նման մեծ բավականություն կստանան այս ցուցադրությունից:

Դեսպան Լին Մ. Թրեյսի

Ս. Երևան
հուլիս 2020թ.

Paul Hamilton

Paul Hamilton was raised in Cocoa Beach, Florida, where as a young man, he sketched birds and fish, knowing early in life that he wanted to be an artist. When the opportunity arose to study at the Columbus College of Art & Design, he moved to Ohio and earned a Bachelor of Fine Arts degree in painting. Enamored by the landscape and changing seasons of his new home, he moved to Ohio permanently. Today, Hamilton continues to engage the landscape with fresh eyes, attending to the visual beauty of a location, its sense of place, and the passing of time, cyclical and linear. He has exhibited extensively throughout the United States, including at the Butler Institute of American Art in Youngstown, Ohio, and David Findlay Galleries in New York. He is a member of both the Columbus Art League and the American Impressionist Society. Hamilton has participated in numerous juried exhibitions and is in the collection of esteemed public institutions, including the James Cancer Hospital at Ohio State University, Columbus.

Փոլ Հեմիլթոն

Փոլ Հեմիլթոնն հասակ է առել Ֆլորիդայի Քոքոու Բիչ ծովափնյա բնակավայրում և արդեն իսկ մանկուց ծագում էր դառնալ նկարիչ: Մանուկ հասակում նա թռչուններ ու ձկներ էր նկարում, իսկ երբ առիթ ընձեռվեց ուսանել Կոլումբոսի գեղարվեստի ու դիզայնի քոլեջում, նա տեղափոխվեց Օհայո, որտեղ էլ ստացավ գեղարվեստի բակալավրի կոչում: Օհայո, իր բնությամբ և տարվա չորս եղանակների հերթագայությամբ, գերեց Փոլ Հեմիլթոնին և նա մշտական բնակություն հաստատեց այնտեղ: Այսօր Փոլ Հեմիլթոնն իր արվեստի միջոցով մեզ նորովի է ներկայացնում Օհայոյի բնապատկերներն ու տեսարանները՝ ի ցույց դնելով ոչ միայն դրանց բնական գեղեցկությունը, այլ նաև արտահայտելով ժամանակի, տարածության, շրջափուլերի իր ուշագրավ ընկալումները: Նրա ստեղծագործությունները լայնորեն ցուցադրվել են Միացյալ Նահանգներում, մասնավորապես՝ Նյու Յորքի Դեյվիդ Ֆինլեյի պատկերասրահներում և Ամերիկյան արվեստի Բաթլերի անվան ինստիտուտում (Յանգսթաուն, Օհայո): Նա Կոլումբոսի նկարիչների լիգայի և Ամերիկյան իմպրեսիոնիստական ընկերակցության անդամ է: Նրա ստեղծագործությունները նաև հաճախակի ներկայացվել են մրցույթներում և ցուցադրված են մի շարք հասարակական հաստատություններում, օրինակ՝ Կոլումբոսում գտնվող Օհայոյի Նահանգային համալսարանին կից քաղցկեղի ինստիտուտում:



Dairy Farm, Mohawk Valley, 2011

Oil on canvas, 52 ½ x 75 in.

Courtesy of the artist and Hammond Harkins Galleries,
Columbus, Ohio

Կաթնաֆերմա, Մոհոք վեյլ, 2011թ.

Յուղաներկ կտավի վրա, 133,4 x 190,5 սմ

Տրամադրվել է Նկարչի և Համնոդ Հարքինսս
պատկերասրահների կողմից (Կոլումբոս, Օհայո)



How Sweetly Comes the End of August, 2011

Oil on panel, 13 x 20 in.

Courtesy of the artist and Hammond Harkins Galleries,
Columbus, Ohio

Ու ավարտվում է քաղցրիկ օգոստոսը, 2011թ.

Յուղաներկ պանտոյի վրա, 33 x 50,8 սմ

Տրամադրվել է Նկարչի և Համնոդ Հարքինսս
պատկերասրահների կողմից (Կոլումբոս, Օհայո)

Janice Lessman-Moss

Janice Lessman-Moss, a native of Pittsburgh, Pennsylvania, lives in Kent, Ohio, where she oversees the textile art program at Kent State University. She received her Bachelor of Fine Arts degree from the Tyler School of Art, Philadelphia, Pennsylvania, and her Master of Fine Arts degree from the University of Michigan, Ann Arbor. Since beginning her career, she has continued to explore all aspects of weaving, combining the ancient craft with the latest digital technologies. Her woven work has been presented throughout the United States and internationally, including solo exhibitions at the Galleria Willa in Lodz, Poland; the Museum of Fine Art and Culture in Las Cruces, New Mexico; and the Kent State University Museum.

Her art practice revolves around an interest in the interconnection of abstract systems rooted in the common binary language of the computer and the loom. Networks of patterns, composed digitally on the computer screen, are informed by the architecture of the weaving process in combination with an intuitive sense of order and improvisation. Based on the geometry of the circle within the square, a relationship is orchestrated between the stability of the horizontal and vertical axes of the grid—the warp and weft threads of the weaving and the dynamic fluidity of the curve. This dense field of motifs is intended to reflect the essence of competing dynamics in our world, circular and linear time of the finite and infinite—a complex connection rooted in an underlying order.

Ջենիս Լեսման-Մոս

Ջենիս Լեսման-Մոսը ծնվել է Փիթսբուրգում (Փենսիլվանիա), սակայն բնակվում է Քենթում (Օհայո) և Քենթի Նահանգային համալսարանում համակարգում է գործվածքային արվեստի ծրագիրը: Նա ուսանել է Թայլերի արվեստի դպրոցում (Ֆիլադելֆիա, Փենսիլվանիա)՝ ստանալով գեղարվեստի բակալավրի կոչում, ապա գեղարվեստի մագիստրոսի կոչում է ստացել է Միչիգանի համալսարանում (Էն Արբոր): Կարիերայի հենց սկզբում Ջենիս Լեսման-Մոսը դիտարկել է ջուլիակագործությունը՝ հինավուրց այս արվեստում ներառելով նորագույն թվային տեխնոլոգիաները: Նրա գործերը ցուցադրվել են ողջ Միացյալ Նահանգներում և աշխարհի բազմաթիվ երկրներում: Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Լոդձի (Լեհաստան) Գալերիա Վիլայում, Նյու Մեյսիկոյի Գեղարվեստի և մշակույթի թանգարանում և Քենթի Նահանգային համալսարանի թանգարանում:

Նա իր արվեստը կառուցում է համակարգչային բինար լեզվի և ջուլիակի հաստոցի արտոնապատ համակարգերի փոխկապակցվածության շուրջ: Նախշերը ստեղծվում են թվային եղանակով՝ համադրելով իմպրովիզի ու ներդաշնակության ենթագիտակցական լուծումները ջուլիակագործության նրբությունների հետ: Շրջանի երկրաչափական առանձնահատկությունների միջոցով նա համակցում է հորիզոնական ու ուղղահայաց առանցքները, գործվածքի միջնաթելը ու հիմնվածքը և ապահովում կորերի դինամիկ անցումները: Այս խիտ հյուսվածքն ի ցույց է դնում մերօրյա աշխարհի մրցակցային շարժընթացը, ներկայացնում որոշյալ ու անորոշ շրջանաձև ու գծային պատկերմամբ, դրանց բարդ միացումներն ու կապերը, որոնց շուրջ ձևավորվում է ներդաշնակությունը:



#431, ©7/13
Cotton, wool, digital jacquard, power loom woven,
handmade felt, 74 x 69 in.
Courtesy of the artist, Kent, Ohio

#431, ©7/13
Բամբակ, բուրդ, ժակարդի թվային գործվածք,
հաստոցային մանվածք,
ծեռագործ թաղիք Չափսը՝ 188 x 175,3սմ
Տրամադրվել է հեղինակի կողմից (Քենթ, Օհայո)

#384, Summer Matrix II, © 8/08
Silk, linen, digital jacquard, hand
woven TC1 loom, 63 x 55 in.
Courtesy of the artist, Kent, Ohio

#384, Ամառային մթնոլորտ II,
© 8/08
Մետաքս, վուշ, ժակարդի թվային
գործվածք, ձեռքով հյուսված TC1
մանվածք Չափսը՝ 160 x 139,7 սմ
Տրամադրվել է հեղինակի կողմից
(Քենթ, Օհայո)



#463A, Fertile Path: Emerald, ©8/17
Silk, linen, digital jacquard, hand woven TC2 loom,
painted warp & weft, shifted weft ikat, 37 x 28 in.
Courtesy of the artist, Kent, Ohio

**#463A, Բարեբեր ուղի.
զմրուխտ, ©8/17**
Մետաքս, վուշ, ժակարդի թվային գործվածք,
ձեռքով հյուսված TC2 մանվածք, ներկված
միջնաթել ու հինվածք, միջնաթելի իկատ գործք
Չափսը՝ 94 x 71,1 սմ
Տրամադրվել է հեղինակի կողմից (Քենթ, Օհայո)

Hovsep Pushman (1877–1966)

Hovsep Pushman studied art in Istanbul, Paris, and Chicago, and was later naturalized as a United States citizen. Influenced by Asian art, Pushman stressed the importance of three main components in his work: color, modeling, and imagination. However, in his paintings, color is paramount.

The Ottoman Empire's entry into World War I precipitated unprecedented violence against Armenians. The conflict between Turks and Armenians devastated many Armenian families. The United States, led by President Woodrow Wilson, joined the war in 1917 and was highly active in relief efforts to the Armenian people. Later that year, November 27, 1917, Pushman's wife, Julia, led a delegation of Armenians to the White House to meet Wilson. The youngest member of the group, Alidz Kurkjian, presented this painting to Wilson. She gave a short speech expressing appreciation for the United States' efforts to help Armenia in times of need. The inscription on the frame reads: *L'Esperance. (Hope.) Presented to Woodrow Wilson, President of the United States, November 27, 1917, by Mrs. Hovsep Pushman, as an expression of thanks for the hope and gratitude his efforts to help suffering Armenia have inspired in the hearts of all Armenian. women.*

The painting depicts Pushman's niece, Dora, at the age of fourteen, dressed in traditional Armenian attire. The look of sadness on her face represents the suffering of the Armenian people. It also represents the countless number of children who perished and those who solely depended on charity for survival. The flower Dora holds is a mountain snowdrop, which some cultures view as good luck and protection from evil. The flowers' appearance in Armenia signal the end of winter and that spring is on its way—a sign of hope for better times. Kurkjian later said that she saw President Wilson wipe tears from his eyes during her presentation of the painting because he was so touched by it. *L'Esperance* hung in the White House through Wilson's final term in office, which ended in 1921. After leaving the White House, the Wilsons moved to a private home on S Street in Washington, D.C. They hung the painting over the fireplace in the home's drawing room where it is on display to the public.

Հովսեփ Փուշման (1877-1966թթ.)

Հովսեփ Փուշմանն արվեստի ուսանող է եղել Ստամբուլում, Փարիզում և Չիկագոյում, ապա ընդունել է ԱՄՆ քաղաքացիություն: Կրելով ասիական արվեստի ազդեցությունը՝ Փուշմանը գեղանկարչության մեջ շեշտադրում էր երեք հիմնական գործոն՝ գույն, բնորոշ և երևակայություն, սակայն նրա գործերում գերակշռող գույնն էր:

Օսմանյան Կայսրության մասնակցությունն Առաջին աշխարհամարտին զուգորդվեց հայերի նկատմամբ անսխառնաբար բռնության դրսևորումներով: Թուրքերի ու հայերի հակամարտության արդյունքում կործանվեցին բազմաթիվ հայկական ընտանիքներ: Միացյալ Նահանգները՝ Նախագահ Վուդրո Վիլսոնի ղեկավարության ներքո, Առաջին աշխարհամարտին սկսեց մասնակցել 1917 թվականից և շատ ակտիվ էր հայ ժողովրդին օգնություն ցուցաբերելու գործում: Այդ նույն տարում՝ 1917թ. նոյեմբերի 27-ին Փուշմանի կնոջ՝ Ջուլիայի կողմից ղեկավարված հայկական պատվիրակությունն այցելեց Սպիտակ տուն՝ հանդիպելու Նախագահ Վիլսոնին: Պատվիրակության ամենաերիտասարդ անդամը՝ Ալիջ Զյուրքչյանը Նախագահ Վիլսոնին նվիրեց այս կտավը՝ որպես երախտոքի նշան դժվարին պահին հայ ժողովրդին աջակցելու համար: Կտավի շրջանակին գրված էր. ««Հույս և ակնկալիք», նվեր ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնին Հովսեփ Փուշմանի տիկնոջից՝ տառապյալ հայ ժողովրդին օգնելու նրա ջանքերի ու բոլոր հայ կանանց սրտում հույս ու երախտոք արթնացնելու համար, 27 նոյեմբերի 1917թ.»:

Կտավում պատկերված է Փուշմանի զարմուհին՝ 14-ամյա Դորան, որը կրում է հայկական տարազ: Նրա դեմքի թախիծը խորհրդանշում է հայ ժողովրդի զրկանքներն ու տառապանքները: Կտավը խորհրդանշում է անհամար կորսված կյանքերն ու Նան և Նրանց, ովքեր կարողացան բարեգործության շնորհիվ պահպանել իրենց գոյությունը: Դորայի ծեռքին ձնծաղիկ կա. սա այն ծաղիկն է, որ պաշտպանում է չարից ու հաջողություն է բերում: Այս ծաղիկն ավետում է գարնանամուտը և հույս է տալիս, որ սպասվում են ավելի լավ ժամանակներ: Քյուրքչյանը հետո պատմում էր, որ կտավը հանձնելիս Նա տեսել է, թե իր պատմությունից հուզված Նախագահ Վիլսոնն ինչպես էր արցունքները սրբում: «Հույս և ակնկալիք» կտավը կախվեց Սպիտակ տանը և այնտեղ մնաց մինչև 1921թ.՝ Նախագահ Վիլսոնի պաշտոնավարման ավարտը: Սպիտակ տանից տեղափոխվելուց հետո Վիլսոնները բնակություն հաստատեցին մայրաքաղաք Վաշինգտոնի Էս Սթրիթ փողոցում գտնվող առանձնատանը, որտեղ կտավը կախված էր բուխարու վերևում՝ հենց այն սենյակում, որտեղ Վիլսոնները հյուրեր էին ընդունում:



L'Esperance, 1917

Oil on board, 31 ½ x 24 ½ in.

Courtesy of the President Woodrow Wilson House, a site of the National Trust for Historic Preservation, Washington, D.C.

Հույս և ակնկալիք, 1917թ.

Յուղաներկ պանոյի վրա, 80 x 62,2 սմ

Տրամադրվել է Նախագահ Վուդրո Վիլսոնի տուն-թանգարանի կողմից (մայրաքաղաք Վաշինգտոն)

Ann Rebele

Ann Rebele has a Bachelor of Fine Arts degree from Ohio State University in Columbus and has been making fabric art for thirty years. Her technique includes creating original hand-dyed, hand-painted, and hand-printed fabrics. Rebele has had many solo art shows and her work is included in numerous national and international juried and invitational exhibitions.

"I have been working with fabrics and fibers almost all of my life, from sewing as a child, to weaving classes in college, to teaching Adult Education courses in Macramé in the '70s. However, it was my discovery of the 'Art Quilt' in the late '80s, where I could combine my lifetime love of sewing and fabrics with my education in art and design that led to my current passion..."

Using plain white untreated cotton or sheer silk organza fabrics, I draw on the fabric with fabric inks; paint on them with inks or fabric paints; hand-dye the fabrics; and/or print on the fabric. With printing, I use photographs or images that I scan into my computer, digitally manipulate, section, and then print onto cotton fabrics that I then sew together. Most of the images are my original photographs. In many of my pieces, I have been adding an additional layer of sheer silk organza material, on which I have drawn and/or painted images. The sheer organza is then layered over a background printed or painted image."

Էն Ռիբել

Էն Ռիբելը գեղարվեստի բակալավրի կոչում է ստացել Կոլումբոսում՝ Օհայոյի Նահանգային համալսարանում և արդեն 30 տարի է ստեղծագործում Է գործվածքային արվեստի ոլորտում: Նա ստեղծում է ինքնատիպ աշխատանքներ, որտեղ գործվածքը ներկվում ու զարդանախշվում է ձեռքով: Նա ունեցել է բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ, մասնակցել միջազգային մրցույթների ու ցուցահանդեսների:

«Ես գործվածքի ու մանրաթելերի հետ աշխատել եմ իմ ողջ կյանքի ընթացքում. մանուկ հասակում կարում էի, քոլեջում ջուլիակագործության դասերի էի գնում, 70-ականներին մաքրամե էի դասավանդում Մեծահասակների ուսուցման ծրագրի շրջանակում: 1980-ականների բացահայտեցի մգդակելու արվեստը, որն ինձ թույլ տվեց կտորի հետ աշխատելու ու կարելու հանդեպ մասկուց ունեցած իմ սերը և արվեստի ու դիզայնի գծով իմ կրթությունը մեկտեղել ու իրականությունն դարձնել իմ նվիրական ցանկությունը:

Ես օգտագործում եմ վուշի չմշակված գործվածք կամ թափանցիկ մետաքսյա օրգանզա. գործվածքի համար նախատեսված թանաքով կամ ներկերով նկարում ու գծում եմ կտորների վրա կամ նախշեր ու պատկերներ եմ տպում: Տպելու համար կիրառում եմ լուսանկարներ կամ պատկերներ, որոնք տեսաներածում եմ իմ համակարգչի մեջ, ենթարկում թվային մշակման, բաժանում մասերի, ապա տպում վուշե կտորների վրա, որոնք հետո կարում եմ իրար: Պատկերների գերակշիռ մասը իմ լուսանկարներն են: Իմ շատ աշխատանքներում ես թափանցիկ մետաքսի երկրորդ շերտ եմ օգտագործում, որի վրա նկարում կամ գծագրում եմ պատկերներ ու այդ թափանցիկ շերտը համադրում տպված կամ նկարված խորապատկերի հետ»:




Old Wood, 2004
 Art Quilt, 43 x 32 ½ in.
 Courtesy of the artist,
 Collection of Mr. and Mrs. Dan Huntsbarger

Հիւ անտառ, 2004թ.
 Մզդակած վերմակ, 109,2 x 82,6 սմ
 Տրամադրվել է հեղինակի կողմից, պ-ն և տ-ն
 Դեն Հանթսբերգերների հավաքածուից

Close to Home, 2004
 Art Quilt, 35 x 47 in.
 Courtesy of the artist,
 Collection of Mr. and Mrs. Dan Huntsbarger

Տանը մոտ, 2004թ.
 Մզդակած վերմակ, 88,9 x 119,4 սմ
 Տրամադրվել է հեղինակի կողմից, պ-ն և տ-ն
 Դեն Հանթսբերգերների հավաքածուից



Acknowledgments Հատուկ շնորհակալություն

Washington, D.C.

Մայրաքաղաք Վաշինգտոնի մեր գործընկերներին՝

Braden Malnic, Curator/ Բրեյդեն Մալնիկ, համադրող

Jamie Arbolino, Registrar/ Ջեյմի Արբոլինո, ռեգիստրար

Tabitha Brackens, Managing Editor/ Թաբիթա Բրեքենս, գլխավոր խմբագիր

Tori See, Editor/ Թորի Սի, խմբագիր

Megan Pannone, Editor/ Մեգան Պանոն, խմբագիր

Amanda Brooks, Imaging Manager and Photographer/

Ամանդա Բրուքս, լուսանկարիչ և նկարչական ձևավորում

Yerevan/ Երևան

Tigranuhi Baghdasaryan, Translator/ Տիգրանուհի Բաղդասարյան, թարգմանիչ

Erica King, Cultural Affairs Officer/ Էրիկա Քինգ, մշակութային կցորդ

Gabriela Salverson, Office Management Specialist/ Գաբրիելա Սալվերսոն,

վարչական կառավարման մասնագետ

Gevorg Tonoyan, Director of Installations and Technical Services, Cafesjian Museum

Foundation/ Գևորգ Տոնոյան, ինստալյացիաներ ու տեխնիկական ծառայություններ,

Գաֆեյսճեան արվեստի հիմնադրամ

Michael Warfield, General Services Officer/ Մայքլ Ուորֆիլդ, գործերի կառավարիչ

Vienna/ Վիեննա՝

Nathalie Mayer, Graphic Design/

Նատալի Մեյեր, գրաֆիկական դիզայներ

Manila/ Մանիլա՝

Global Publishing Solutions, Printing/

Global Publishing Solutions հրատարակչություն



Published by Art in Embassies
U.S. Department of State, Washington, D.C.
July 2020

<https://art.state.gov/>